

ՆՈՐԱԲԱՑ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
Հակոբյան Ն. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, Հայաստան)
archaeology.sci.am

Բանալի բառեր՝ հուշարձան, պեղումներ, մշակութային շերտ, մշակութային ժառանգություն:

1. 2010 թ. հուլիս-օգոստոս ամիսներին (որոշ ընդհատումներով) մեր կողմից իրականացվել են պեղումներ Մայր Աթոռ Սբ Էջմիածին վանքի տարածքում՝ կապված հին Վեհարանի վերակառուցման շինարարական աշխատանքների հետ:

2. Հին Վեհարանը կառուցվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Ղազար Ջահկեցու կողմից՝ 1738-1751 թթ. «Շնորոք Արարչին չքնաղ յօրինամամբ՝ կառուցեալ բազմածախ արդեամբ Պատրիարգարանս ու, Մեծին Ղազազա Սրբազան վեհին Ձեռամբ 1190 (1741/42)»: Արձանագրված է սեղանատան պատին: Ս. Էջմիածին Մայր Տաճարը և մյուս շինություններն, ըստ գրավոր աղբյուրների, կառուցվել են պատմական Վաղարշապատ քաղաքի միջնաբերդի տարածքում, ուր տեղակայված են եղել թագավորական պալատն ու Անահիտ-Արտեմիսի տաճարը, բաղնիքը և հասարակական այլ շինությունները:

3. Պեղումների միջոցին բացվեցին արտադրական կառույցներ (թրծման վառարաններ), աշտարակաձև շինության հիմնապատերի մնացորդներ և ճարտարապետական հորինվածքով բացառիկ, գետնափոր տուֆակերտ մի կառույց: Որևէ տեղեկություն նորաբաց հուշարձանի վերաբերյալ չունենք, բացառյալ Ս. Հ. Սարգսյանի հաղորդման. «Ղազարապատ հյուրանոցի մոտ բացվել են ներքնատուն (թրծած աղյուսե, կրաշաղախով պատերի հետքեր), իսկ եկեղեցու տպարանի մոտ՝ բաղնիքի շենք:

4. Նախնական դիտարկումները թույլ են տալիս արձանագրել, որ նորաբաց հուշարձանը (ավերակված խստագույնս) ներկայանում է մշակութային երեք տարբեր շրջաններ ընդգրկող ժամանակահատվածով կամ շերտերով:

Մշակութային առաջին շերտն, անշուշտ, վերաբերում է աղյուսաորմ աշտարակաձև շինությանը՝ կառուցված, ամենայն հավանականությամբ, Մովսես Տաթևացու (լուսարար, ապա և կաթողիկոս՝ 1629-1632 թթ.) կողմից: Շինությունն ունի բուրժի հատակագիծ՝ կառուցված վառ կարմիր, լավ թրծած աղյուսներով: Պեղումները պարզեցին, որ աշտարակն ունի (ըստ պահպանված վիճակի) եռաշերտ հատակ՝ պատած գաջե սվաղով: Նույն կերպ են և պատերը (երկու երեսից):

Երկրորդ մշակութային շերտը ներկայանում է հնոց վառարաններով՝ թվով երեքը: Պահպանված է դրանցից մեկի կրակարանը՝ օդամուղ խողովակով և ակնափոսով: Այն շրջանաձև է՝ բնորոշ ժամանակի նմանօրինակ կառույցների հորինվածքին (Օրան-Կալա, Կափաղակ, Մինգեչաուր և այլուր): Երկրորդ վառարանը (նույն հորինվածքով) պահպանված է կիսով չափ, լցված հոծ մոխրաշերտով, ավերակված շինաշխատանքների միջոցին: Վառարանների շուրջ պահպանված է աղյուսապատ հատակի մի փոքր հատված, ուր կանգնում էին, սովորաբար, խեցեգործ վարպետները:

Առավել ուշագրավը՝ մշակութային երրորդ շերտը ներկայացնող գետնափոր շինությունն է, որը մինչ այսօր եզակի է մեզ հայտնի վաղ միջնադարյան նմանատիպ հուշարձանների շարքում: Հուշարձանն արտաքուստ ուղղանկյուն հորինվածքով է, խուլ պատերով, ներքուստ շրջանաձև, փակ պատրիաններով, տուֆե սալածածկ տանիքով, խարխլված հետագա կառուցումներից: Հատակը հողապատ է, նկատելի են թափված ալեբաստրե սվաղի մնացորդներ: Դեպի դուրս, ուղղությունը Մայր Տաճարի արևմտյան մուտք, պահպանված են թվով հինգ տուֆակերտ աստիճանները: Շինությունը կառուցողական կերպով և շինանյութով՝ (հողե լիցք, հղկված,

տրամատված տուֆե երկգույն քարեր) նախնական դիտարկումներով, կարելի է վերագրել IV-V դարերին:

Գտածոներ-հասարակ և ջնարակապատ խեցեղեն (նկարեն և փորագիր), վառարանների շրջապատից IX-XIII դդ. խեցեգործությանը բնորոշ տարրերով:

Իրանական հախճապակե սպասքի առարկաներ, գավաթներ, թասեր, նկարազարդված լաջավարդով: Խեցեղենի այս տեսականին թվագրվում է XVI-XVIII դդ. և համարվում է Սէֆեֆյան Իրանի խեցեգործական արհեստանոցների արտադրանք:

Մետաղե առարկաներ՝ պղնձե ափսե, նիկելապատ մոմակալներ (XIX-XX դդ.), բրոնզե ցանցկեն սկավառակաձև կափարիչ և այլ մանր աննշան իրեր: Բացառիկ է պղնձե ափսեն, իր նվիրատվական արձանագրությամբ.

«ՅՇՏԷ ԱՐՐԱՄԻՆ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԱ ԶԵՌԱՄԲ ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ»:

A NEWFOUND ARCHAEOLOGICAL MONUMENT AT THE SURROUNDINGS OF
THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Hakobyan N. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of
Archaeology and Ethnography, Armenia)